

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2021թ.

N __ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՎԹԱՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28²-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի Արցախի պողոտա 4-րդ նրբանցք N10 (հանրակացարանի մասնաշենք), Արցախի պողոտա 4-րդ նրբանցք N10 (սպորտային մասնաշենք), Արցախի պողոտա 4-րդ նրբանցք N10/1 հասցեների քանդման ենթակա 4-րդ աստիճանի վնասվածություն (վթարային տեխնիկական վիճակ) ունեցող հանրակացարանային 3 շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագիրը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված հատուկ հաշվում (հաշվի համարը՝ 900018211020) կուտակված միջոցների մնացորդից 500,000.0 հազար ՀՀ դրամի չափով գումարի հաշվին:

2. Երևանի քաղաքապետին՝ ներկայացնել առաջարկություն Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեում համապատասխան չափով ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

2021թ. _____ « _____ »
Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԹԱՐԱՑԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Երևան քաղաքում քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային լինելու վերաբերյալ եզրակացություններ են տրվել Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (հանրակացարան), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 (սպորտային մասնաշենք), Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/1, Վարդաշեն 6-րդ փողոց հ.68ա, Վարդաշեն փողոց հ.66/1 հանրակացարանային և Ե.Կողբացու հ.41, Շիրակի հ.60, Արզումանյան հ.10, Արզումանյան հ.12 (թվով 2 մուտք), Արզումանյան հ.17/3 (3-րդ մուտք) և Ֆուչիկի հ.23 հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերին: Գործող օրենսդրության շրջանակներում, Երևանի քաղաքապետարանի կողմից մասամբ իրականացվել է Արցախի 4-րդ նրբանցքի հ.10 հասցեում գտնվող քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքի և սպորտային մասնաշենքի վերաբնակեցման գործընթացը, սակայն Երևան համայնքի տրամադրության տակ գտնվող առկա բնակարանային ֆոնդը հնարավորություն չի տալիս ամբողջությամբ ավարտին հասցնել նշված շենքերի բնակիչների վերաբնակեցումը:

Վերը նշված հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման համար ընդհանուր առմամբ պահանջվում է շուրջ 340 բնակարան, և ներկայումս միայն Արցախի 4-րդ նրբանցքի քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու գործընթացն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ շուրջ 2000 քառ. մետր մակերեսով բնակելի ֆոնդ:

Հաշվարկներն իրականացվել են 1 քառ. մետրի համար միջինացված շուկայական արժեքով՝ 250.0 հազ. դրամի հաշվարկով: Սրանով իսկ ներկա փուլում որոշ չափով կլուծվի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի բնակիչների վերաբնակեցման, նրանց կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգի կանխման, նոր բնակարանային ֆոնդի ստեղծման օրակարգային հարցերն ու խնդիրները:

Արցախի 4-րդ նրբանցքի քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցման ծրագրում նախնական հաշվառված է 64 ընտանիք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՎԹԱՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵԳՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վթարային տեխնիկական վիճակ ունեցող շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՎԹԱՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վթարային տեխնիկական վիճակ ունեցող շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2021 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ